

53

Սեւեմա Լագերլենգ

Կարճաձկիկ

Թիֆլիս 1914

85

L-12

9 x 3003

8-93
Լ. Զ

138 ա

Գ Բ Ա Դ Ա Բ Ա Ն Ը



ՍԵԼՄԸ ԼԵԳԵՐԼԻՑԻ

ԿԱՐՄՐԱՎԶԻԿԸ

Թարգ. Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

Պատկերազարդ

Մի կտավ

№ 4
Բ. ՏԻՊ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԷՍ», Գրաֆսկայա № 6

1914

6134

Ի Ծ Գ Ր Ա Գ Ա Ր Ա Ն Ը

85

1712



ՍԵՆՍԵ ԼԵԳԵՐԻԾՓ

սա

ԸՆ

ԿԱՐՄՐԱՎԶԻԿԸ

Թարգ. Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

Պատկերազարդ

100 558

Մի կապեկ.

№ 4

ՏԻՊ

Հ.Ա.Լ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ր.Ա. ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
7/XI-1922

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐԱԼԵՍ», Դրաձևական № 6.
1914

Կ Ա Ր Մ Ա Վ Զ Ի Կ Ը

Այս դէպքը պատահեց այն ժամանակ,
երբ Աստուստեղծեց ոչ միայն երկինքն ու
Լուսինը, յի և կենդանիներն ու բոյսերը, ու-
րոնց նա իսկոյն եւթ անուններ տուեց:

Մի ժամանակի մասին շատ պատմու-
թիւներ են մնացել, և եթէ դրանք բոլորն
էլ այժմ յայտնի լինէին, աշխարհիս երեսին
ամեն բան մեզ համար հասկանալի ու պարզ
կը լինէր:

Ահա հէնց այդ ժամանակ մի օր Տէրը,
նստած զրախտում, ներկում էր թռչուններին.
բայց ներկը հատաւ, և կարմրակատարը պիտի
մնար մի գորշ թռչուն, եթէ Աստուած իր վրձիննե-
րը չսրբէր նրա փետրիկներով: Հէնց այդ ժամա-
նակ էջն ստացաւ երկար ականջներ, որովհետեւ
նա ոչ մի կերպ չէր կարողանում յիշել իրեն
տուած անունը: Մի բանի քայլ անելուց յետոյ,
նա մոռացաւ իր անունը, երեք անգամ յետ

դարձաւ և հարցրեց յա մասին: Այն ժամանակ Տէրը, համբերութիւնը կորցնելով, բռնե-
նրա ականջներէց և ասաւ.

— Բո անունը է՞ Է, է՞ Է՞:

Եւ այդ ասելով նա աշեց նրա ականջներէց, որ է՞ր լաւ լսի յիշի իր անունը:

Այդ նոյն օրը Տէրը պատժեւ մեղիւն չէնց որ ստեղծեց մեղուն, նա իսկայն ևս սկսեց մեղը հաւարել, իսկ կենդանիւնն որ մարդիկ, առնելով մեղրի քաղցը հոտը, մօտ գամ մեղրը փորձելու: Սակայն մեղուն ցանկանաւ էր ամբողջ մեղրը իր համար պահել և զը համար էլ խայթում էր մեղրի խորիսխին մօտեցող բոլոր արարածներին: Նկատելով այդ Տէրը իր մօտ կանչեց մեղիւն և նրան պատժեց.

«Նս քեզ շնորք տւի աշխարհիս ամենաբաղցը բանը՝ մեղրը ժողովելու, բայց ես քե իրաւունք չտւի այդպէս խիստ վարւելու ք մեղաւորների հետ: Իմացիր որ դու կը մեռնես, եթէ թունաւորես որեւէ մէկին, ով կցանկանայ քո մեղրի համը ճաշակել...»

Հէնց այդ ժամանակն էր, երբ ծղրիղը կուրացաւ, իսկ մըջիւնը զրկւեց իր թևերէց:

Այդ միևնոյն օրը շատ հրաշքներ պատահեցին:

Մեծ և հեզ Տէրը ամբողջ օրը անցկացրեց զրախտի մէջ՝ ստեղծում և կենդանութիւն էր սփռում իր շուրջը, իսկ երեկոյեան դէմ նա մտածեց ստեղծել մի փոքրիկ մոխրագոյն թռչուն:

«Յիշիր, որ անունդ Կարմրավզիկ է», ասաց Տէրը թռչունին:

Նա բորձրացրեց թռչունին, և սա թռաւ: Թռչնակը մի պտոյտ արաւ, ծանօթացաւ այն երկրի հետ, որտեղ իրեն վիճակած էր ապրելու, իսկ յետոյ ցանկացաւ իրեն դիտել: Հէնց այդ ժամանակ նկատեց թռչնակը, որ իր ամբողջ մարմինը, նոյնիսկ վիզը, մոխրագոյն է: Կարմրավզիկը մի լաւ շուռ ու մուռ եկաւ և սկսեց դիտել իր մարմնի արտացոլումը ջրի մէջ, սակայն իր մարմնի վրայ ոչ մի կարմիր փետուր չգտաւ: Այն ժամանակ նա յետ թռաւ Տիրոջ մօտ: Տէրը բազմել էր ողորմածարար և հեզօրէն. նրա ձեռքերէց դուրս էին

Թուշում թիթեռները և ճախրում նրա գլխի վերև, աղաւնիները փարում էին նրա ուսերին, իսկ շուրջը բսնում էին վարդեր, շուշաններ և ուրիշ ծաղիկներ:

Փոքրիկ թռչնակի սիրտը դողում էր երկիւղից, բայց այնուամենայնիւ նա թռչելով հետզհետէ մօտենում էր Տիրոջը և վերջապէս նստեց նրա ձեռքի վրայ:

Այն ժամանակ Տէրը հարցրեց նրան, թէ ինչու է նա վերադարձել:

— Ես ցանկանում էի Քեզ մի հարց տալ, պատասխանեց թռչնակը:

«Ի՞նչ ես ցանկանում», հարցրեց Տէրը:

— Ինչո՞ւ համար են ինձ Կարմրավզիկ կոչում, քանի որ ես ոտից մինչև գլուխ մոխրագոյն եմ: Ինչո՞ւ են ինձ Կարմրավզիկ անւանում, քանի որ մարմնիս վրայ մի կարմիր փետուր անգամ չկայ:

Թռչնակը իր փոքրիկ սև աչիկներով աղերսական հայեացք ձգեց Տիրոջ վրայ և շուտ տեսեց իր գլուխը:

Նա իր շուրջը տեսաւ կարմիր և ոսկեայ

թեթև փոշիով ծածկւած կարմիր փառեաններ, կարմիր ոտներով արագադներ, էլ չեմ ասում ոսկէ ձկնիկներն ու վարդերը: Եւ իհարկէ, իսկոյն նրա գլխով անցաւ այն միտքը, որ բաւական է ինքն էլ մի փոքրիկ կարմիր բիծ ունենայ իր կրծքի վրայ, այն ժամանակ ինքն էլ հրաշալի թռչնակ կը լինի և իր անւանը իսկապէս արժանի:

— Ինչո՞ւ համար են ինձ Կարմրավզիկ կոչում, երբ ես ամբողջապէս մոխրագոյն եմ, մի անգամ էլ կրկնեց նա և սպասում էր, որ իրան Տէրը կը պատասխանի. «Ա՛խ, բարեկամս, ես բոլորովին մոռացել եմ քո կրծքի վրայ եղած փետուրները կարմիր գոյնով ներկելու: Սպասիր, ես այդ կուղղեմ»:

Սակայն Տէրը հանգիստ ժպտաց ու ասաց.

— Ես բեզ կարմրավզիկ կոչեցի և դու էլ պէտք է այդ անունը կրես: Սակայն դու ինքդ քո արժանիքներով պէտք է ձեռք բերես կրծքիդ վրայ կարմիր փետուրիկներ:

Այդ խօսքերը առելուց յետոյ նա բարձրացրեց իր ձեռքը և թռչնակին թուցրեց:

Թռչնակը մտածելով թռչում էր դրախտի մէջ: Ի՞նչ կարող է անել այդպիսի մի փոքրիկ թռչնակ, որպէսզի ձեռք բերի կարմիր փետրիկներ:

Նա մտածեց իր համար բոյն շինել վայրի վարդերի թփի մէջ: Նա կարծում էր, թէ վարդի թերթիկները կընկնեն նրա կրծքի վրայ և իրանց դոյնը կը տան նրան:

Շատ և շատ տարիներ անցան այդ ամենա-
երջանիկ օրից: Կենդանիներն ու մարդիկ արդէն վազուց էին թողել դրախտը և ցրւել ամբողջ երկրի վրայ: Մարդիկ սովորել էին մշակել հողը, նաւարկել ծովերի վրայ, իրանց համար հագուստներ և բնակարաններ պատրաստել, փառահեղ տաճարներ շինել և հիմնել այնպիսի հսկայական քաղաքներ, ինչպէս են Թեբէն, Հռոմը և Երուսաղէմը:

Եւ ահա վրայ հասաւ մի օր, որը դեռ երկար ժամանակ անջնջելի կը մնայ մարդկային պատմութեան մէջ: Այդ օրը, առաւօտեան, Կարմրավզիկը նստել էր մի ցածր ու մերկ բլրի վրայ, Երուսաղէմ քաղաքի պատե-

րի տակ և բնում պատսպարւած իր փոքրիկ ձագուկներին երգ էր երգում:

Կարմրավզիկը պատմում էր իր գաւակներին ստեղծագործութեան հրաշալի օրւայ մասին. նա պատմում էր թէ ինչպէս Տէրը ամեն-
բնի անուններ է տւել: Իւրաքանչիւր Կարմրավզիկ այդ պատմութիւնը պատմել է իր երեխաներին, սկսած ամենաառաջին այն Կարմրավզիկից, որ լսեց Աստծու խօսքերը և դուրս թռաւ նրա ձեռքերից:

— Եւ տեսէք, տխրութեամբ ասաց նա, այն օրւանից արդէն անցել են շատ տարիներ, ծագել են անթիւ վարդեր, ձեւերից դուրս են եկել անհամար թռչնիկներ, սակայն Կարմրավզիկը դեռ ևս մի փոքրիկ և մոխրագոյն թռչնակ է ու մինչև այսօր չէ արժանացել կարմիր փետրիկներին:

Նրա ձուտիկները լայն բաց արին կտուցները և հարցրին իրանց մօրը, թէ արդեօք նախնիքները փորձել են այնպիսի մի մեծ գործ կատարել, որ արժանանան այդ անգնահատելի կարմիր փետրիկներին:

— Մենք ամենքս արիներ, ինչ որ կարող էինք, պատասխանեց թռչնակը, բայց մեզանից ոչ ոքին չյաջողեց ձեռք բերել այդ ցանկալի նշանը: Դեռ առաջին Կարմրավզիկը մի անգամ պատահեց իր նման մի թռչնակի և նրան այնպէս ջերմ սիրեց, որ սիրտը վառւեց. «Ահ, այժմ հասկանում եմ, մտածեց նա, Տէրը ցանկանում է, որ ես ջերմ և ուժգին սիրեմ, և սիրտս այրող կրակից կըծքիս փետրիկները ներկեն»: Սակայն նրան ոչինչ չաջողեց, ինչպէս և մեզ ամենքիս, և ինչպէս չի յաջողւիլ ձեզ էլ:

Թռչնիկները տխուր ծւծւացին. նրանք վշտացան, որ իրանց փոքրէկ և խաւոտ վզիկների վրայ երբէք կարմիր փետրիկներ չեն լինիլ:

— Մենք մեր յոյսը դրել էինք մեր երգի վրայ, շարունակեց իր պատմութիւնը պառաւ թռչունը. Արդէն առաջին Կարմրավզիկը այնպէս հրգեց, որ նրա կուրծքը թրթռում էր ոգևորութիւնից և նա մտածում էր. «այս վառվորուն ոգևորութիւնը, որով ես երգեցի և

որն ապրում է հոգուս մէջ, կարմիր գոյնով կը ներկի իմ փետրիկները»: Սակայն նա սխալեց, ինչպէս սխալեցինք մենք ամենքս, ինչպէս կը սխալէք և դուք:

Ճուտիկների կիսամերկ կոկորդից նորից յուսահատ մի ճիշ դուրս թռաւ:

— Մենք մեր յոյսը դրել էինք նաև մեր քաջութեան վրայ, շարունակեց պառաւ թռչունը: Առաջին Կարմրավզիկն արդէն քաջութեամբ կռւեց ուրիշ թռչնակների հետ և նրա կուրծքը վառւեց յաղթական կրակով. «Ահ, մտածեց նա, իմ փետրիկները կը ներկեն կարմիր գոյնով պատերազմական այն կրակից, որ վառւում է իմ սրտում»: Սակայն նա սաստիկ սխալեց, ինչպէս մենք ամենքս, ինչպէս կը սխալէք և դուք:

Ճուտիկները ոգևորւած ճչացին, որ իրենք էլ կը փորձեն խոստացւած նշանը ձեռք բերել, սակայն պառաւ թռչունը պատասխանեց նրանց, որ այդ անկարելի է:

Ինչի վրայ են դնում նրանք իրենց յոյսը, երբ նրանց նշանաւոր նախնիքներն ան-

գամ չեն կարողացել այդ բանը ձեռք բերել։
Ի՞նչ կարող են անել նրանք, եթէ ոչ միայն
սիրել, երգել և կուլել։ Ի՞նչ կարող են անել
նրանք...

Թռչնակը չվերջացրեց իր խօսքը, որով-
հետև երուսաղէմի ղռներից դուրս եկաւ ամ-
բոխը և իր բայլերն ուղղեց դէպի այն բլու-
րը, որտեղ գտնուում էր նրա բոյնը։ Այդ ամ-
բոխի մէջ կային հպարտ ձիեր հեծած և նի-
զակներ բռնած զինուորներ, մեխեր և մուր-
ճեր տանող դահիճներ, աչքի էին ընկնում
բահանաներ և դատաւորներ, լացող կանայք,
իսկ նրանց առջևից գնում էր մերկ թափա-
ռականներից բազկացած ամբոխը։

Փորըիկ մոխրագոյն թռչնակը՝ իր բնի
ծայրին նստած գողգոթայով նայում էր։ Նա
վախենում էր, որ մարդիկ կը կոխեն վայրի
վարդերի թուփը և կը սպանեն իր ճուտիկ-
ներին։

— Նայեցէք, ասաց նա նրանց, ամուր
կպէք իրար և զգոյշ կացէք։ Ահա մի ձի գա-
լիս է ուղիղ մեզ վրայ։ Ահա մի զինուոր, որի



կօշիկներին երկաթներ են կպցրած: Դէպի մեզ է գալիս և ամբոխը:

Թռչնակը բոլորովին լռեց և հանգստացաւ: Նա գրեթէ մոռացաւ իրենց սպառնացող վտանգը:

Յանկարծ նա մտաւ բնի խորքը և իր թևերով ծածկեց հուտիկներին:

— Ոչ, այս արդէն սարսափելի է, ասաց նա, ես չեմ ուզում, որ դուք ամեն ինչ տեսնէք: Ահա ամբոխը երեք աւազակ է տանում խաչելու:

Եւ նա երկիւղով տարածեց իր թևերը, որպէսզի իր զաւակները ոչինչ չտեսնեն: Նրանք միայն լսում էին մուրճի հարւածները, ամբոխի և ժողովրդի վայրենի աղաղակները: Կարմրավզիկը ամեն ինչ մանրամասն դիտում էր: Երկիւղից լայն բացւած նրա աչիկները չէին հեռանում այն երեք դժբախտներից:

— Ինչ դաժան են մարդիկ, մտածեց թռչնակը: Նրանք չբաւականացան այդ խեղճներին խաչելով, դեռ ուզում են նրանցից մէկի գլխին փշեայ պսակ էլ դնել: Ես

այստեղից տեսնում եմ, թէ ինչպէս փշերը արիւնոտում են նրա ճակատը: Իսկ այն մարդը այնքան գեղեցիկ է, նրա հայեացքը այնքան համեստ է, որ չի կարելի նրան չսիրել: Երբ ես տեսնում եմ նրա տանջանքը, ինձ թւում է, թէ իմ սիրտը ծակծրկւում է սուր սլաքներով:

Եւ թռչնակը աւելի և աւելի էր ցաւակցում փշեայ պսակով խաչւածին:

— Եթէ ես արծիւ լինէի, մտածեց նա, ես կը հանէի նրա ձեռքերից մեխերը և իմ սուր ճանկերով կը ցրէի նրան շարշարողներին:

Նա նկատեց, թէ ինչպէս արիւնը հոսում էր խաչւածի ճակատից, և այլ ևս չըկարողացաւ նստել իր բնում:

— Թէև ես փոքր եմ և թույլ, այնուամենայնիւ պէտք է որևէ բան անեմ այդ դժբախտ Մարտիրոսի համար, մտածեց թռչնակը:

Նա դուրս թռաւ բնից, բարձրացաւ երկնքի և սկսեց լայն պտոյտներ գործել խաչւածի գլխի վերևը:

Նա երկար ժամանակ թռչում էր, բայց տատանւում էր մօտենալու խաչւածին, որով-

հետև խնրը մի փոքրիկ և վախկոտ թռչուն էր
և երբէք չէր մօտեցել մարդկանց: Բայց նա
հետզհետէ սիրտ առաւ, մօտեցաւ նրան և իր
կտուցով հանեց փշերից մէկը, որ խրեւ էր
նրա ճակատը: Հէնց այդ ժամանակ թռչնակ!
վրայ ընկաւ խաչածի արիւնից մի կաթիլ:

Այդ կաթիլը իսկոյն եեթ ներկեց նրա
վզի և կրծքի փոքրիկ ու քնքուշ փետրիկները:
Երբ թռչնակը նորից թռաւ դէպի իր բու-
նը, ճուտիկներն ազդակեցին:

— Դո կրծքի փետրիկները կարմիր են:
Նրանք վարդից աւելի կարմիր են:

— Դա այն թշուառ մարդու ճակատից
դուրս հոսած արեան կաթիլն է: Այդ արիւնը
կանհետանայ, եթէ ես լողանամ առևակում:

Բայց որքան էլ լողանում էր փոքրիկ
թռչունը, կարմիր բիծը չէր անհետանում: Իսկ
երբ նրա ճուտիկները մեծացան, նրանց վիզն
ու կրծքն էլ զարդարւած էին կարմիր փե-
տուրներով: և այդ շարունակում է մինչև
այսօր:

53

0004024

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004024

